

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**  
**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/1**

**15 ապրիլի 2014 թ.**

Քննարկվեց Ա/Ձ Հակոբ Մխիթարյանի 20.03.2014 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՆորՆորքի ՀՏ 14.03.2014 թ-ի թիվ 1108734 ստուգման ակտի դեմ:

**Ա/Ձ Հակոբ Մխիթարյանի գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ 2014 թ-ի մարտի 14-ի թիվ 1108734 ստուգման ակտով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով Ա/Ձ Հակոբ Մխիթարյանին առաջադրվել է տուգանք 300.000 դրամի չափով:

Ակտում նշվում է, որ հարկային տեսուչներ Արտեմ Ազատյանը, Լևոն Սարգսյանը և Մանուկ Հովհաննիսյանը Երևանի Մ.Ավետիսյանի 1-ին փող. 30/1 հասցեում գտնվող խանութից կատարել են հսկիչ գնում 1 տուփ «Դանհիլլ» տեսակի ծխախոտ 800 դրամ արժեքով, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով /ոչ սիգարետ է գնվել և ոչ էլ կանխիկ դրամ ետ վերադարձվել/:

Ըստ գանգատի, Ա/Ձ Հակոբ Մխիթարյանը տեսուչներին նախօրոք ասել է, որ հսկիչ-դրամարկղը չի աշխատում, և որ նա սպասում է հսկիչ-դրամարկղը վերանորոգող վարպետին:

Ա/Ձ Հակոբ Մխիթարյանը տեղեկացնում է նաև, որ նման խախտման համար արդեն իսկ տուգանվել է 2013 թ-ի օգոստոսի 28-ին /ի դեպ նույնպես խաբեությամբ/: Հարկային տեսչությունը որդեգրել է խաբեությամբ բյուջեն լցնելու և հազիվ գոյատևող մանր բիզնեսով զբաղվող տնտեսավարող սուբյեկտները փակելու քաղաքականություն:

Հազիվ գոյատևող փոքր խանութին, որի շրջանառությունը չնչին գումար է կազմում, 6 ամսվա ընթացքում տուգանում են 450.000 դրամ: Ըստ գանգատի, փետրվարի վերջին, նույն տեսուչների խնդրանքով Ա/Ձ Հակոբ Մխիթարյանը պետական բյուջե շուրջ 120.000 դրամ է փոխանցել:

Ա/Ձ Հակոբ Մխիթարյանը հայտնում է, որ ակտի հետ չի համաձայնվել, այն չի ստորագրել, չի նշել նաև ամսաթիվը /տեսուչները իրենից վերցրած գրիչով հետո ավելացրել են ամսաթիվը/:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Հակոբ Մխիթարյանը խնդում է վերանայել ստուգման ակտը:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Հակոբ Մխիթարյանի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Հարկային տեսուչ Մանուկ Հովհաննիսյանը նշեց, որ իր կողմից 03.03.2014 թ-ին, ժամը 11:45-ին, ք.Երեւան, Մ.Ավետիսյան 1-ին փ. 30/1 հասցեում գտնվող խանութից գնվել է 1 տուփ «Դանհիլլ» տեսակի ծխախոտ՝ 800 դրամ արժեքով, որի դիմաց կանխիկ վճարվել է 1000 դրամ և վերադարձվել է 200 դրամ մանրը: Ա/Ձ Հակոբ Մխիթարյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Կատարված գնման դիմաց ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստը Ա/Ձ Հակոբ Մխիթարյանը պատճառաբանել է ՀԴՄ-ն խափանված լինելու հանգամանքով:

Ստուգում անցկացնող հարկային ծառայողները Ա/Ձ Հակոբ Մխիթարյանին ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման:

Հանձնարարագրի դարձերեսին առկա են Ա/Ձ Հակոբ Մխիթարյանի ստորագրությունները հանձնարարագրի մեկ օրինակը ստանալու և ստուգումը փաստացի սկսվելու վերաբերյալ:

Այնուհետև գնված ապրանքը ետ է վերադարձվել Ա/Ձ Հակոբ Մխիթարյանին և ետ է ստացվել կատարված գնման գումարը: Մասնավորապես, ստուգող անձանց կողմից 03.03.2014 թ-ին կազմվել է վաճառված ապրանքների ետընդունման թիվ 1108734 արձանագրությունը: Ընդ որում, ապրանքների ետընդունման թիվ 1108734 արձանագրությունը ստորագրված է Ա/Ձ Հակոբ Մխիթարյանի կողմից՝ առարկություններ չունեմ նշագրմամբ: Այսինքն, ակնհայտ է Ա/Ձ Հակոբ Մխիթարյանի կողմից ՀԴՄ-ն անսարք լինելու պայմաններում ապրանք վաճառելու փաստը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 21-րդ կետի համաձայն. «ՀԴՄ-ի աշխատանքի ընթացքում անսարքություն հայտնաբերելիս՝ պատասխանատու անձը պարտավոր է անջատել ՀԴՄ-ն և դրա մասին անհապաղ տեղեկացնել իրավասու ղեկավար անձին: Իրավասու ղեկավար անձն անհրաժեշտության դեպքում տեխնիկական սպասարկում և նորոգում իրականացնող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կենտրոն) ներկայացնում է հայտ՝ համաձայն N 4 ձևի՝ անսարքության վերացման համար՝ հայտի մեկ օրինակը ներկայացնելով հարկային տեսչություն: Մինչև ՀԴՄ-ի նորոգումը կամ այն նորով փոխարինելը՝ ՀԴՄ-ների պարտադիր կիրառմամբ գործարքներ կատարելն արգելվում է»:

Հանձնաժողովը գտնում է, որ ստուգմամբ հիմնավորվել է Ա/Ձ Հակոբ Մխիթարյանի կողմից ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները խախտելու հանգամանքը, որի համար և կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամի չափով:

Հանձնաժողովի 01.04.2014 թ-ի նիստի քննարկման արդյունքում սույն գործի վերաբերյալ ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ուղարկվել են վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ):

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնելու դեպքում մեկտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք չիսի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ